



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ  
ոչ առևտորային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձեռփոխել կամ օգտագործել առկա նյուրը առեղելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

Պեղկամենք բալոր յեւկրների, միացի՝



Ա. ՖՐԻԴՈՒԼԻՆ

# ՏԱՄԸ ՊԱՏԳԱՄ ԱՆԱՍՆԱՊԱՀԻՆ

Թուս. Փոխազրեց՝

Ա. ԹԱԼԵՈՒՆՑ

Յերկրորդ հրատարակություն

ԴՐԱՎՈՒԿՈՄԱՏԵ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1927

# ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՐԵՍ ԵՆ ՑԵՍՆԵԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Ուղեցույց անտառային աօխատավորի 50 լ.
2. Ս. Շագունց.—Մեր անելիքները (սպառված) 20 »
3. Հ. Փիրումյան յեզ Ս. Մելքոնյան.—Ինչու ձեռնտու յեզործարանում յուղ և շվեյց.պանիր պատրաստել 3 »
4. Հ. Փիրումյան.—Խոսարույսերը և նրանց մշակության յեղանակները (սպառ.) 10 »
5. Խ. Ավգալբեզյան.—Հ. Ս. Խ. Հողային Որենսդիրքը, բացարական հարցու պատասխաններով, մասն առաջին, աշխատավորական հողոգտագործություն (սպառ.) 40 »
6. Պ. Հերիմյան.—Թթենու մշակությունը 10 »
7. Պ. Հերիմյան.—Շերամի վորովը, նրա կերակրելն ու խնամքը 10 »
8. Խ. Շերփյան.—Կաթնանանտեսության դործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) 1n. 50 »
9. Կ. Ա. Մելիք-Շահնազարյան.—Մխախոտի մշակությունը 20 »
10. Ս. Ֆրեզուին.—Տասը պատղամ անասնապահին 20 »
11. Խ. Շերփյան.—Անհատակմն, թէ կոռապ. կաթնատնտ. 10 »
12. Հ. Հարուրյուն.—Բատրակ, կնքիր պայմանագիր (չափ.) 5 »
13. Մ. Թումանյան.—Շարքացան և նրա նշանակությունը 15 »
14. Խ. Շեր-Ներսիսյան.—Ինչպես մշակել խաղողի այգիները (28 նկարով) 35 »
15. «Շերեսներս զետի գյուղ».—Անդրկովկասյան Յերկրացին կոմիտեյի բանաձեռ զյուղացիական հարցի մասին, Ս. Շաղունցի նախարանով (սպառված) 15 »
16. Հայաստանի Կոմմունիստական կուսակցության Կենսության Կոմիտեյի Շորորոգ Պլենումի Բանաձեվերը (սպառված) 15 »
17. Ո. Արմենյան.—Խոշոր յեղջյուրավոր անսասունների ժանտախտը 15 »
18. Հ. Ազարյան.—Գյուղատնտեսական բանվորությունը և միջազգային կոմմունիստական շարժումը: 40 »
19. Ն. Խան-Շալյան.—Խողեցույց արդյունավետ խողարուծություն 15 »

ՊԵՂԵՏԱՐԵՆԵՐ ԲՈԼՈՐ ԽԵԿՐԵՄԵՐԻ, ՄԻԱՑՔ.

№ 40 «Գ Յ Ա Խ Դ Ա Յ Ո Ւ Կ Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն» № 40

Ա. ՖՐԻԴՈՒԼԻՆ

ՏԱՍԸ ՊԱՏԳԱՄ  
ԱՆԱՍՆԱՊԱՀԻՆ

A 38742

Թուսո. Փոխազենց՝  
Ա. ՌՈՒՍԻՆՅ

Յերկրորդ հրատարակություն

ՀՈՒԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ - 1927



Գրառեալ, № 58 (ը). Տիրամ 2000. Պատվ, № 2027  
Հայոց կղզավի 2-րդ առ. Ցերեան.

**Յ Ա Ր Ա Կ**

	<i>b p.</i>
1. Յերկրորդ հրատարակության առթիվ	3
2. Առաջին պատզամ	4
3. Յերկրորդ	7
4. Յերրորդ	10
5. Զորբորդ	13
6. Հինգերորդ	16
7. Վեցերորդ	17
8. Յոթերորդ	20
9. Աւթերորդ	22
10. Իներորդ	24
11. Տասերորդ	27
12. Յեղարակացություն	31

---

## ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Տասը Պատգամը» շուտ սպառվեց. Յերկրորդ ճրատարակության առթիվ ավելորդ չենք համարում ասեմու այն, վորմեր անասնապահությունը համարյա թե հասել և նախառազարդման թվերին:

Քանի ինդքում այս նաջողությունը ձեռք բերելուց հետո, այժմ մեր անասնապահությունն առաջադրում է նոր խնդիր՝ լավացնել վորակը՝ նույն անասունից ավելի շատ յեկամուտ ստանալ յեզ ավելի շատ կաթնասթերքներ բերել շուկա:

Մեր գյուղացու կովը տարեկան միջին նաշվով տալիս և օդույլ կաթ։ Յեթե մենք կարողանանք առաջիկա տարիների ընթացքում այդ յեկամուտը կրկնապատկել, այսինքն մի կովից ստանալ 120 դույլ կաթ, այդ նշանակում է, վոր ավելացրած կլինենք մեր կաթնարդյունաբերությունը, կռվերի քանակը թողնելով նույնը։

«Ավելի յավ և մի կաթնասու կով ունենալ, բան յերկու կաթնապական, ավելի յավ և ունենալ մի կով յեզ նրան բավ կերակրել, բան յերկու կով յեզ կերակրել վաս։

Այս և մեր անելիքը առաջիկայում։

Յեթե յերկրագործության խեթական խնդիրն և սույն յերկու հասկ այն տեղից, որ մինչեւ այժմ ստացվում եր միայն մեկը, ապա անասնապահության համար յերթական խնդիր և ստանալ յերկու շիշ կաթ այն կովից, վորից մինչեւ այժմ գյուղացին ստանում եր մի շիշ կաթ։

Իսկ այդ կախված և անասունների ցեղն աղնվացնելուց, լավ կերից, ուշադիր խնամքից, մի խոսքով այն տասը պատգամից, վոր արված և այս զրբի մեջ։

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՅ

ԱՇԽԱՏԵՑԵՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ, ՎՈՐՈՇ ԾՐԱԳՐՈՎ.

Անասնապահության վերականգնման գործում հարկա-  
վոր և վրացիք և հաջորդականություն։ Ամենից ա-  
ռաջ հարկավոր եւ այդ ծրագիրը պարզել և ի նկատի ու-  
նենալով գրագական անասության պայմանները, վորոշել  
թե դրույթին ինչ տեսակ անասուն և հարկավոր, ինչպիսի  
շնություն, կերի ինչ չափ և այլն։ Հետո պիտի վորոշել,  
թե ներկա պայմաններում ինչ կարող ենք տալ և ինչ  
չենք կարող, ինչ տալ առաջին հերթին և ինչ—վերջին։  
Պետք եւ պարզել, թե ինչ կարող եւ տալ ինքը գյուղացիու-  
թյունը։

Բավական չե տսել, թե մեղ հարկավոր եւ ոգտավեա  
անասուն, լուսավոր և տաք գոմ, խոտաբույսերի և արմա-  
տապտուղների մշակույթ, մաքրություն, ինսամբ և այլն։  
Ինականաբար ծագում ե մի հարց՝ թե ինչ ցեղի անա-  
սուն, ինչպիսի գոմեր են հարկավոր, վճրաեղից ստանալ  
խոտաբույսերի և արմատապտուղների սերմեր և, վոր գրւ-  
խավոր ե՝ ինչից սկսել։

Գյուղացու անասունին մոտենալիս հարկավոր և մա-  
տիս, թուղթ և համրիչ ունենալ, գրել, թե ինչքան կաթ և  
տալիս այդ անասունը, կշռել տված կերը և վերջում հաշ-  
վել։ Կովը քննել վոչ թե դրսից, այլ ներսից, քննել բազ-  
մակողմանի և գնահատել նրան։ Ապրանքի շահավետու-  
թյունը յերկում ե կերի մի միավորից ստացած կաթից,  
այդ կաթի յուղու լինելուց և կովի առողջությունից,

Պազգան մորթով ցեղական կովերը և սրանց կողմանից  
ները թող «վերից վար» նայեն մեր փոքրահասակ և խրդ-  
ճուկ արտաքինով կովերին։ Մեր զյուղացու անտեսու-  
թյան վերականգնումն այդ խղճուկ արտաքինով կովերի  
շնորհիվ և լինում։

Մեր ապրանքի տափացնումը հնարավոր և միայն այն  
զեղքում, յերբ զյուղացիք միահամուռ ուժերով զործի  
կողչեն։ Ի՞նչ սպուտ կատացվի, յերբ մի զյուղացի խնամի  
մի ցեղի կով, իսկ հարեանը՝ մի այլ ցեղի։ Դարձյալ նույն  
պատկերը կատացվի, ինչվոր կա այժմ մեր զյուղերում և  
բնորոշ և մեր տավարի համար՝ բազմատեսակություն։  
Հարկավոր և աշխատել կազմակերպված, վոչ թե ջոկ-ջոկ,  
այլ միասին։

Ամբողջ աշխատանքը վորոշ հերթով պիտի դասավո-  
րել Յեթե մենք կաթնանուեսական արտել կազմենք  
այնտեղ, վորաեղ կեր չկա, կովերը քիչ են, պարզ և, վոր  
այդ աշխատանքից բան չի կուրս գաւ։ Պիտի սկսել կերի  
պայմանները լավացնելուց, ճահիճները ցամաքեցնելուց, ա-  
րուսները բարելավելուց և այլն։ Յեթե մենք կովերի ծնելն  
աշխանը զցենք և տաք, լուսավոր զոմ, տաք հորթանոց  
չպատրաստենք, ոլարդ և վրբ այդպիսի աշխատանքից ել  
սպուտ չեք ստանա։

Յեթե ցանկանում ենք մեր անասունների ցեղն տպ-  
նվացնել և ընարել ենք արգեն մի ցեղ, չի կարելի կովը  
թողնել այն տավարի հետ, վորի մեջ մի այլ ցեղի ցուլ (բուղա)  
կա, թե չե զրանից ել սպուտ չի լինի։

Հարկավոր և խմանալ, թե անասնապահությունը լա-  
վացնելու համար ինչը հարկավոր և հիմք ընդունել, ա-  
ռաջին հերթին ի՞նչ կատարել և հետո՝ ի՞նչ։

Մեր զյուղացու անտեսությունը չափաղանց ծուռ

ու մուռ կողմեր և պակասություններ ունի։ Մի տեղն ուղղում ես, մի ուրիշ տեղն և ծովում։ Հարկավոր և իմանալ թե առաջ վնասեղն ուղղել։

Հողաչափը հողը բաժանելուց առաջ հողի հատակադիմն և կազմում և հետո հողը բաժանում։ Այդպես ել հարկավոր և անամնապահության վերականգնման համար։ պիտի ունենալ աշխատանքի վորոշ ծրագիր։ Առանց այդ ծրագրի մենք գործին ոգուտ չենք տա, ավերածությունը չենք վերացնի։ Իսկ ծրագիրը կարելի յէ մշակել միահամուռ ուժերով, դուցե և ոգնության կանչելով մասնագետ։ Ուստի կազմակերպեցե՛ք, մշակեցեք ծրագիր յեվ վորոշ հայորդականությամբ համարողներ կիրառեք կյանքում։

## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԳԱՍ

ՅԵՐԵԿ ԿԵՐՆ ԱՊԱՀՈՎ Ե, ՄԹԵՐՔՆԵՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱ-  
ԿԵՐՊԵՑԵՔ ԿՈՌՊԵՐԱՍԻՎ ՀԻՄՈՒՆՔՈՎ.

Պահրի, կաթի և յուղի կաղմակերպված սպառումն այն  
խթանն է, վորը միայն կարող է զործի մեջ շահագրգռու-  
թուն առաջ բերել և հիմք ձառայել հետազտ բարդա  
վաճանն:

Կաղմակերպված սպառման առավելության լովագույն  
որինակ կարող է ձառայել թանիայի գյուղական տնտե-  
սությունը: Յերբ անցյալ զարու 70-ական թվականներին  
գերմանական պատերազմի ժամանակ թանիան քայլայվեց  
և ժողովուրդը աղքատության դռւոն ընկավ, նա հասկա-  
ցավ յուր վատնգավոր վիճակը: Միանալով իրար, կաղմա-  
կերպելով կոսովերատիվներ, դանիացիները միանամուռ  
ուժերով աշխատանքի անցան՝ կյանքի նոր շինարարու-  
թյան համար:

Յեզ կոսովերացիան ժողովրդին փրկից կորսաից:

Շնորհիվ պանրագործական արտելների և յուղագոր-  
ծական կոսովերատիվների, վորոնց խիտ ցանցով ամրող  
յերկիրն եր պատաճ, տափարն աղնվացավ, լափացավ տ-  
նտառների խնամքն ու կերը և ամրող անտեսությունն  
այնքան բարձրացավ, վոր թանիան այժմ գյուղական արն-  
տեսության որինակ և համարվում: Թանիան իրոք վոր  
կոսովերացիայի յերկիր և, գյուղացիական ընկերություն-  
ների յերկիր:

Մեր յերկրում գյուղացու անտեսության դրությունը

շատ մոտ ե այն դրության, վորագիսին ուներ Դանիայի գյուղացին սրանից 50 տարի առաջ: Նրա պես մեր յերկիրն ել աղքատացել ե: Յեկայսր վիճակից յելնելու ել ուրիշ միջոց չկա, մանավանդ կաթնատնտեսության համար, միակ ուղին տանում ե գեղարի կոռագերացիան:

Յեթե առաջ կաթի և յուղի կոռագերացիան իր ճամբին հանդիպում եր վաշխառու առետրականին, վորն ուժեղ կերպով մրցում եր կոռագերատիվի հետ, իրեն վերցնելով առյուծի բաժինը,—այժմ այդ մրցակիցն այս չկա: Կոռագերատիվի միջոցով կաթնամթերքներն սպառելու համար շուկան լայնարձակ բաց ե: Հարկավոր ե շտապել տիրանալ շուկային, վորագեսպի չգարթնի վաշխառու միջնորդը—մեր որերի առետրականը, վորը կարող ե դանդաղեցնել կաթի և յուղի արդյունաբերության կոռագերացումը:

Բոլորն ել գիտեն, վոր գյուղատնտեսության ամեն ճյուղի վաշխառուներ կան գյուղում: Վաշխառուները զընում են խաղողի բերքն այգեգործական շրջաններում: Նրանք չեն քաշվում և մանրունք գնելուց՝ ձու, կաթ, վոշխար և այն: Գնորդ վաշխառուն այդ ապրանքի արդյունաբերության գործում վոչ մի ըիսկ չունի, իսկ շատ հաճախ վաշխառովի պատճառով այդ անտեսությունը մնաս ե տալիս գյուղացուն: Վաշխառուն ապրանքի գներն իջեցնում ե մինչ այն աստիճան, վոր այդ ապրանքի արդյունաբերությունն այլևս ձեռնտու չի գյուղացու համար:

Միշտ պետք ե հիշել, վոր ներկայումս միայն սեփական ուժերով կարելի յե անտեսությունը վերականգնել:

Միայն այն ժամանակ, յերբ գյուղացիք կազմավեն կուլակ վաշխառուների լծից և կկազմեն կաթնատնտեսական ընկերություններ, ինչպես կազմում են սպառության մասին առաջարկ և առաջարկ կաթնատնտեսական ընկերությունների համար:

զական, գյուղատնտեսական, վարժատությալական և այլ ընկերություններ — միայն այն ժամանակ գյուղացին կարող է բարեխափել իր անտեսությունը, ողնել ինքն իրեն։ Յեվ այդպիսի ոգնությունն ամենից հասաւան եւ ուղիղը։

Անասնագոտության անօգուտ լինելը շատ պատճառներից ե կախված, բայց այդ պատճառները զլխավորապես յերկուան են՝ կաթի և մյուս մթերքնների կանոնագոր սպասման բացակայությունը և յերկրորդ՝ կաթի արգյունաբերությունն թանգ լինելը։

Այդ թանգության պատճառը կերի ողականն ե, անշնորք կերակրելը, դյուղացու տավարի ցածր վորակը, վատ խնամքը և այլն։ Այդ ամենը թանգացնում է կաթի արդյունաբերությունը։

Ուրեմն, յեթե գյուղացիք վարչել են կաթնատնտեսությամբ սպարապել, ամենից առաջ պիտի ազատվեն վաշխառու միջնորդներից և իրենք քաղաքում վաճառեն կամ կազմակերպեն սպանրի, կաթի, յուղի և այլ մթերքների սպասման գործը։

Միայն կաթնատնտեսական արտելը կազատի գյուղացուն վաշխառու միջնորդից։ Միայն արտելը կարող է հետաքրքրություն տռաջ բերել գեղի անասնապահությունը։ Միայն կաթնատնտեսական արտելը գյուղացու անտեսությունը կդարձնի շահագիտ և գյուղացիք միայն արտելներ կազմակերպելով կարող են սպանել իրենց։

## ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԳԱԱՍ

ՑԵՂԱԿԱՆ ԱՆԱՍՈՒԽ ԶՈԿԵՑԵՐ ՀԸՏ ՈՒՏԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑԵՎ  
ՎՈՉ ՀԸՏ ԳՈՒՅՆԻ

Վորպեսզի մեր տեղական տավարն արտասահմանից  
բերված տավարին հաղթի, հարկավոր ե տեղական տեսակ-  
ների մեջ նախնական ընտրություն կատարել, հարկավոր ե  
ամենից շատ ոգտավետ անասուներին ընտրել: Այդ աշխա-  
տանքը պիտի սկսել այնտեղ, վորտեղ կերի համար լավ  
պայմաններ, լավ արոտատեղեր կան, վորտեղ ժողովուրդը  
շահագրգոված ե անասնապահության զարգացմամբ և վոր-  
տեղ այդ ուղղությամբ վորոշ աշխատանք կատարված ե,  
անասունների ցեղը մի քիչ ազնվացրած ե: Մեր յերկրի  
սահմաններում կան այդպիսի մի քանի շրջաններ:

Շատերն ավելորդ տեղը ձգտում են, վոր ամբողջ  
տավարը «մի գույնի» լինի: այդ դյուրեկան ե տչքի հա-  
մար, բայց այդպես կարող ե վարվել միայն նա, ով անաս-  
նապահությունն իր համար զվարճալիք ե դարձրել, ում հա-  
մար արտաքին տեսքը միակ զրավիչն ե ամբողջ աշխա-  
տանքի մեջ: Անցյալում անասնապահների մեջ այդ տա-  
րածված եր և ունեցավ շատ տխուր հետեանք, վորովհետե  
որինակելի անասնապահությունը նրանք զվարճալիքի պես  
մի թեթև զբաղմունք եյին համարում: Միանդամայն ան-  
հիմն ե և այն կարծիքը, վոր իբր թե ու կոմի ավելի կաթ-  
նատու յե, կամ կարմիր կովի կաթն ավելի լավ ե: Մըանք  
վոչ մի հիմք չունեցող յեթաղբօւթյուններ են. ահա թե  
ինչու միտք չունի ցեղական անասուն ընտրելիս առաջ-

նորդվել գույնով։ Միակ հաստատ չափն անասունի ովտակաբությունն է, նրա աված շահի չափը։

Ինչպես քաղաքում առըսդի համար վոչ մի նշանակություն չունի, թե ինչ կովի կաթ և խմում սե, թե կարմիր, միայն թե կաթը համեղ լինի, այնպես ել զյուղացու համար միենույն պիտի լինի, թե ինչ գույնի յե իր կովը՝ սե, թե կարմիր, միայն թե շատ և լավ կաթ տա։

Մեր աեղական անասուններից ընտրություն անելու գեղքում պիտի և առաջնորդվել կաթի չափով, թե այս կամ այն կովը վնասան և ինչպիսի կաթ և տալիս։ Միայն այսպիսի ավյաներ ունենալուց հետո կարելի յե այս կամ այն կովը ջոկել վարդես ցեղական ապրանք, առանց ուշագրություն գարձնելու գույնին։ Տեղական անասունների հիմք պիտի ընդունել կաթնատու և առողջ մարմին ունեցող կովին։ Մնացած բոլոր նշանները, զանազան բծերը, աչքի շրջադիրը, գույնը և այլն չպիտի խանդարեն այդ հիմնական աշխատանքին։

Անասունապահ գյուղացիներն անմիջապես պիտի հոգան անասունների ցեղական զրքերի մասին։ Նախքան այդ զրքերը ձեռք բերելը, հարկավոր և իմանալ թե ինչ զրել այդ զրքերի մեջ։ Առաջին հերթին հարկավոր և նշանակել կաթի չոփը, թե ամեն անգամ վճրան կաթ և տվել կովը և կաթնատու լինելու ինչ նշաններ ունի. ցեղական զրքի մեջ հարկավոր և զրել այն նշանները, վորոնք վերաբերում են կենդանու ծննդաբերության կամ առողջության, որին կմնի լայնությունը, յետեվի վոանների կամնդնելու ձեր, կրծքի լայնը ու յերկայնքը։ Պետք և զրել կենդանու ընդհանուր տեսքը, զիսի և յեղջյուրների տեսքը, վոր շատ ընօրուց և աեղական մի քանի ահսակների համար։

Ահա թե ինչն միայն արտաքին նշաններով բան չի

լինում, անհրաժեշտ ե իմանալ և ներքին հատկությունը, կենդանու վորակը։ Ուրեմն՝ հարկավոր ե միահամուռ ջանքերով մեր տեղական տեսակներից ընտրել, ամենից կաթնատուն և չի անցնի մի յերկու տասնյակ տարի, մենք ել Դանիայի և Շվեդիայի նման կարող ենք տաել վորունենք մեր տեղական տավարը, ընտրած ու գտած, վոր չենք փոխի զրաի վոր և ե տեսակի հետ։

Կենդանիների այդ ընտրության աշխատանքը պիտի սկսել թե վերեից և թե ներքեից։ Վերեից՝ հատուկ աջակցության շնորհիվ, մասնագետների միջոցով զնահատելով տեղական կենդանիները և լավերն ընտրելով, ցուցահանդեմներ կազմակերպելով, խրախուսական պարզեներ տալով, առւրքից ազատելով ցեղական կենդանիներին և գովառի ցեղական գրքերի մեջ մուծելով այդպիսի կենդանիներին։ Այսպիսի աշխատանք պիտի կտաարվի վերեից, իսկ ներքեից՝ զյուզացիները պիտի միանան և կազմակերպեն հասարակական անառնաբուծարաններ։

## ԶՈՐՌՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ՄԻԱՅԵ Ք ՅԵՎ ԿԱԶՄԱԿԻՐՊԵՑՑ Ք ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒ-  
ԾԱԲԱՆՆԵՐ

Հասարակական անասնաբուծարանը միակ արագ և  
ճշմարիտ ճանապարհն է անձնական անտեսությունից կող-  
ին ստեղծագործության անցնելու համար։ Մեր ներկա  
պարմաններում միանգամայն հնարավոր է նման անասնա-  
բուծարանների հիմնումը։ Նրանք նյութական առանձին  
ծախք չեն պահանջում, հարկավոր է միայն ազգաբնակու-  
թյան լայն խավերի ջերմ և գիտակից աջակցությունն  
այդ գործում։

Նման անասնաբուծարանները կազմակերպվում են հե-  
տեյալ ձևով. — Բարում են մի գյուղ, վորի բնակիչները  
ծանոթ են անասնապահության և հետաքրքրվում են այդ  
գործով. ընտրած գյուղը պիտի անասունների կերով ապա-  
հոված լինեն։ Այդ գյուղում անասնատերերը միանում ե  
կազմում են անասնապահությունը բարեավող մի ընկե-  
րություն։ Այդ նպատակի համար հրավիրվում ե մի մաս-  
նագետ, վորը միևնույն ժամանակ հանդիսանալու յե ա-  
նասնաբուծարանի վարիչը կամ վերահսկիչը։

Այդ հսկիչը շրջում է միության յուրաքանչյուր ան-  
գամի անտեսությունը, նայում ենրա անասուններին, գնա-  
հատում ե ոգտագետ լինելու անսակետից և վորշում ե,  
թե հարմար է արդյոք բազմացնելու համար։ Յեթե հա-  
գանություն է տրվում, գրանցվում ե ցեղական գրքի մեջ։  
Գրքի մեջ գրանցված անասունն, ի հարկե, դարձյալ

մասմ և տիրոջ լիակատար իրավասության տակ: Տերը պարտավորվում է միայն կանոնավոր կերակրել ու խնամել: առանց միության վարչության գիտության այդ անասունից ստացած հորթը տերը չի կարող վաճառել: Յեղական գրքի մեջ զբանցված անասուններին ըեղմնավորում և միայն վորոշ ցուլ (բուզա), վոր յենթարկվել ե մասնագետի ըննության: Համաձայն վերջին պայմանի, բեղմնավորումը չի կարող կատարել ուղած ժամանակ՝ նախիրի մեջ, այլ վորոշ որ. զբա համար մի վորոշ ժամանակով կենդանուն առանձնացնում են նախիրից: Կենդանու բեղմնավորման և ծնելու սպասելիք որը զբանցվում ե ժատյանի մեջ:

Կայանի ամբողջ գործունեյության ընթացքում նշանակվում է տված կերի և ստացված կաթի քանակը: Յերբեմն կաթը յենթարկվում է քննության՝ յուղի չափը վորոշելու համար: Այսպիսով, տարվա վերջին հնարավոր և լինում ասել թե ձեւնտու յե այս կամ այն կենդանին պահեր, թե չե:

Անասնաբուծարանների շրջակա դյուղերում դավասի հողբաժինը պետք է կազմակերպի անասնապահության գասընթացներ, խոշոր և մանր անասունների ցուցահանդես, գասախոսություններ՝ կերի, խնամքի և պահպանման մասին, փորձեր պիտի կատարել որինակելի կերակրման շուրջը և այլ. Մի խոսքով՝ այդ անասնաբուծարանները զառնում են մի տեսակ ոջախներ, վորտեղ կենարոնանում և շրջանի անասնապահական ամբողջ աշխատանքը:

Այդ անասնաբուծարաններն այժմ փոխարինելու յեն առաջվա ցեղական անասուններ արտադրող զործարաններին, վորոնք գանվում եյին մասնավոր անձանց իրավասության տակ: Այժմ մասնավոր անասնապահ զործարանատեր չկա, այժմ անասուններն ել, հողն ել գտնվում են

աշխատավոր գյուղացիության ձեռքին, իսկ այդ գյուղացիությունն մեծ մասամբ անկազմակերպ ե և ի վիճակի չե անասնապահության բարդ խնդիրները լուծելու Այդ բոլոր հարցերի պատասխանը միայն հասարակական անասնաբուժարանները կարող են տալ:

Բայց գրանից անասնաբուժարանների լավ հորթը չի ուղարկվի մասգործին, այլ կտահպանի և իր հերթին կտա արժենքավոր սերունդ: Անասնաբուժարանի մի քանի տարվա աշխատանքի արդյունքը կլինի այն, վոր շրջանում կջոկվեն միանման և հավասար արժեք ունեցող կենդանիներ:

Հասարակական անասնաբուժարանները հենց իրենց՝ գյուղացիների գործն ե. մասնագետները միայն աշխացում են, ոգնում են իրենց փորձով և վիտությամբ: Հասարակական անասնաբուժարանը ցուցադրական կողմ ել ունի, այդտեղ մեր գյուղացու տավարը յենթարկվում է վերագնահատման: Այդ անասնաբուժարանները չսպազանց շատ նյոթ (հորթեր և այլ) կտան, վորի կարիքն այժմ զգում ե բնակչությունը:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՎ

ԳՈՄԸ ՊԵՏՔ Ե ԼՈՒՍԱՎՈՐ ԼԻՆԻ

Անասնապահության զարգացման համար ընտրությունից և կերակրելուց բացի, հարկավոր են մի շարք այլ միջոցներ՝ կիթը նույն բարձրության վրա պահելու համար, ինչպես և ընտրած կոմի առողջ պայմաններում կերակրելու համար։

Ամենից առաջ գոմի տաքսության ու լուսավորության հարցը, Գոմը պետք ե տաք լինի, ցուրտ գոմում կենդանին ավելի շատ և յենթակա զանազան հիվանդությունների, կաթն ավելի քիչ և տալիս, իսկ վոր գլխավորն և, ցուրտ գոմում կոմի ավելի շատ և ուտում։ Այդ ավելի կերը գնում է նրա մարմի պահպանության համար։

Բարեբախտաբար մեր գյուղերում գոմը շատ և տաք, այնպես վոր զանդաւավելու կարիք չունենք։ Մեր գոմերը մի խոշոր պակաս ունեն—նրանք լուսավոր չեն, Ցերեկով, յերբ դուրսն այնքան առատ ե լույսը, գոմի ներսում, մի փոքրիկ ճեղքից, հաղիվ լույսի մի թույլ շողք և ներս ընկնում, այնպես վոր գոմը միշտ ել մնում և կեռ մութի մեջ։

Մթությունը ևս ճնշիչ կերպով և ազդում կենդանիների զարգացման, ինչպես և այն ողուտի վրա, վոր սպասում ենք նրանցից։ Հասարակ փորձն անդամ ցույց է տալիս, վոր լուսավոր և արձակ գոմում կենդանին իրեն շատ ավելի լավ և զգում, քան կիսամութ վորջում։

Հարկավոր ե որ առաջ վերացնել մեր գոմերի այդ պակասը և գոմերը լուսավոր շինել։



## ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՍ

ԱՆՑԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՆՔ ԾՆԵԼՈՒՆ

Կովի կաթի քանակը բարձրացնելու գործում հետազա աշխատանքը գարնան փոխարեն ծնելուն աշնանը անցնելն է, այդ բանը մի քիչ դժվար է և կապված է տնտեսության մասնակի փոփոխման հետ: Յեթե կաթի սպառումը կանոնավոր չի կազմակերպված, յեթե չկա տաք և լուսավոր գոմ, տաք հորթանոց, այդ դեպքում զարնան ծնելն առավելություն ունի աշնան ծնունդից և, վոր զլխավորն է, ծնունդը լինում և տարվա տաք յեղանակին ավելի մաս: Նորածին հորթին սովորաբար տա նում են խրճիթ և ողանում մինչև տաքերն ընկնելը: Գարնան ծնունդը սովորաբար նախիրում բեղմնավորելու արդյունք է, իսկ այդ տեսում և ամբողջ ահառը: Ուրեմն՝ քանի նախիրն ընդհանուր և և արածում է միասին, դար նան ծնելը ևս կշարունակվի: Գարնան ծնելը մի ուրիշ կողմ ել ունի: գյուղացու ընտանիքը գարնան և մանա վանդ աշխատանքի յեռուն ժամանակ՝ ամրան ընթացքում ստիպված և ունենալ լույս սնունդ, քանի վոր կովի կաթից բացի ընտանիքի մյուս ուտելիքն սպառել է:

Ի հարկե հասկանալի յե, վոր այս ամենը նշանակություն ունի միայն այն շրջանների համար, վորտեղ որի նակելի անտանապահություն չկա: Շահավետ անամնապահության համար կառկած չկա, վոր աշնան ծնելն ավելի ձեռնտու յե և միայն այդ դեպքում հնարավոր և կաթնատեսությունն արդյունավետ դարձնել և մեր աեղական անառունների վորակը բարձրացնել: Կաթնատեսությամբ վաղուց պարապող յելքուական աղգերը մի

առած ունեն՝ «աշնանը ծնող կովը հավասար և տարին յերկու անգամ ծնելուն»:

Ծնելուց 25—28 որ հետո կոմի սկսում ե բեր գալ. այդ մասամբ կախված ե կենդանու առողջությունից և նրա սնվելու պայմաններից: Այդ շրջանը աչքաթող չպիտի անել, հակառակ դեպքում ծնելը մի ամիս ել կուշանա, յեթե առիթից չոզավել, մոտավորապես 3 շաբթից հետո նորից սկսում ե բեր գալու շրջանը:

Յեթե կովը փետրվարին և ծնել, հարկավոր ե մարտին բեղմնավորել, վորպեսզի հաջորդ ծնունդը լինի գեկտեմբերին. իսկ յեթե գեկտեմբերին ծնել ե, պիտի բեղմնավորել հունվարին՝ հոկտեմբերին ծնելու համար: Հաջորդ տարին բեղմնավորումը կարելի յե կատարել նոյեմբերին և կովը կծնի ռզուտոսին: Այսպիսով մի 2-3 տարուց հետո կարելի յե անցնել աշնան ծնելուն: Դրա համար հարկավոր ե աչքաթող չանել ծնելուց հետո բեր գալու առաջին շրջանը:

Յեթե առաջին անգամ յերինչն ենք բեղմնավորում, հարկավոր ե, վոր այդ յերինչն առնվազն յերկու տարեկան լինի, վորպեսզի առաջին ծննդի ժամանակ յերինչն արդին 3-ի մոտ լինի կամ  $\frac{3}{2}$  տարուց ավել:

Այդ տեսակետից աշնան մնացած հորթերն ավելի լավ են, քան զարնան ծնածը: Առաջին տարին նրանք ազատ թռչկոտում են, իսկ յերկրորդ զարնան նրանք այնքան արդեն մեծացած են լինում, վոր կարելի յե բեղմնավորել: Իսկ զարնան ծնած հորթերն առաջին ամառը թռւյլ են լինում, իսկ յերկրորդ տարին՝ շատ անգամ դեռ չեցված արդեն բեղմնավորվում են, ժամանակից շուտ, դրա համար ել լավ չեն դարձանում և դառնում են վատ կաթնատու կովեր:

Այսպես ուրեմն, զարնան ծննդից աշնանն անցնելու համար պետք ե ձեռք քաշել նախիրում բեղմնավորելուց

և կանոնավորել այդ։ Գումարմ կտմ բակում բեղմնավորելն այն սպառն ունի, վոր խնայվում ե բուզայի ուժը և յերկրորդ՝ այդպիսի բեղմնավորում ուզած ժամանակ կարելի յե կատարել և կանոնավորել ծնունդի ժամանակը։ Նախիրի մեջ ամեն մի ցույի նորմալ հաշվով ընկնում և տարեկան մոտ 50-60 գլուխ կով, իսկ տանը բեղմնավորելու գեպքում՝ տարեկան մոտ 80 գլուխ։ Այս վերջին գեպքում հարկավոր ե ունենալ ցեղային ցուլ և տոանձին կայան։

Փորձը ցույց ե ավել վոր ավելի լավ և հորուզած (կապած) արածել, քան նախիրում։ Այս գեպքում կերը տնտեսվում է, կովը զիրանում և և հանգստանում, տափարածից կախում չունի, կովերն իրար չեն խփի ու վնասի և ընդհանրապես կովերը կաղամագեն վատ արտներում, ճահճուա աեղերում արածելու բոլոր մնաներից։ Նախիրի մեջ արածելու գեպքում կովն ավելի շուտ և հիվանդանում զանազան ախտերով, քան կապած արածելիս։

Ցեթե կովը բեղմնավորել են վաղ գարնան, նա շատ հաճախ ծնում ե մինչև սաստիկ ցրտերի սկսելը, այդ գեպքում կովն ավելի հեշտ և ծնում, քիչ և հիվանդանում, ավելի լավ և սնվում, քանի վոր աշնան կերն ավելի լավ և գտրնան կերից։ Շատ քիչ և պատահում, վոր աշնան ծնած կովը հիվանդանա, հորթը կուշտ կաթ և ուտում, վորովհետեւ զյուղացու ընտանիքի համար աշնանը կաթն այնքան ել հարկավոր չի, վորքան գարնանը և ամառը (դաշտային աշխատանքների ժամանակ)։

Հարկավոր և ձմեռվա համար պատրաստել լավ մննդի պաշար (քուսալ, թեփ, ալյուր) և արմատապտղներ, վորակնազի ծնելուց հետո կովի կաթի քանակը համապատասխան բարձրության վրա մնա, թե չե հետո, գարնան դեմ, կաթի քանակը բարձրացնել շատ դժվար կլինի։

## ՅՈՅԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ՎՈՐՔԱՆ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՇԱՏ ԱՆԱՍՈՒՆ ՊԱՀԵՑԵՔ ՅԵՎ  
ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՄԱՏԴԱՇՆԵՐԻՆ

Մեր անասնապահությունը կարելի յե արդյունավետ  
գարձնել վոչ միայն մեծահասակ անասուններին ինամե-  
լով, այլ և բարելավելով մատղաշների վիճակը:

Հորթերի պահպանման ժամանակ նկատի պիտի ու-  
նենալ վոր ծնվելուց հետո կաթնասու կենդանին շատ  
արագ և զարգանում հենց առաջին որերում և ամսում: Այդ  
ժամանակ շատ լավ և շատ արագ զարգանում ե թե վոս-  
կրային մասը և թե մկանները (միսը) և այլն: Յեթե այդ  
շրջանից չոգոսվենք և խնայենք կերը, այն ժամանակ հե-  
տագայում շատ դժվար կլինի մատղաշ հորթի զարգացումը  
կանոնավորել և պակասը շտկել: Այն ինչ մեր զյուղե-  
րում նկատված ե այդ թերատ կերակրել կենդանուն ծըն-  
վելուց հետո առաջին ամիսներում: Կաթնասուն կենդանի-  
ների համար կաթն անփոխարինելի կեր եւ Ծնվելուց ան-  
միջապես հետո հորթին պիտի առանձնացնել մորից և  
կերակրել վորոշ շափի համաձայն:

Այդ շափը պիտի վորոշել ծնվելու յերկրորդ որը. հոր-  
թին խակույն պիտի կշռել յեթե վորձ ե, պիտի ամեն որ  
տալ կենդանի քաշի մի հինգերորդի չափ կաթ. խոկ յեթե  
եդ մի վեցերորդի չափ. որինակ՝ յեթե վորձ հորթի  
քաշը 40 ֆունտ ե, ուրեմն որեկան պիտի տալ 8 ֆ. կաթ,  
յեթե եդ հորթի քաշը շ0 ֆունտ ե, որեկան պիտի տալ  
5 ֆունտ կաթ: Կաթի այդ քանակը միանգամից չպիտի  
տալ, այլ 4—5 անգամ որեկան. կաթը պիտի տաք լինի  
և մոքուր: Ամանեղենը ևս պետք է մոքուր պահել ամեն  
անգամ կաթ տալուց առաջ և հետո՝ պետք ե ամանեղենը

Դանալ մաքուր ջրովի Զեռները պետք ե մաքուր ողահեռ ամեն անդամ սատունվ լվանալ:

Կաթի չափը վորոշելուց հետո այդ ձևով կերակրում են 3 որ, վորից հետո ավելացնում են մի ֆունտ, կերակրում դարձյալ յերեք որ, հետո նորից ավելացնում ե այն, մինչև յերեք շաբաթ: 3-րդ շաբաթվա վերջին մեր հորթը յեթե ունի մեկ փութ կամ մեկ ու կես փութ կենդանի քաշ; սասանում ե որեկան 12—15 ֆունտ մաքուր, յերեսը չքաշած կաթ:

Զորբորդ շաբաթից հետո սկսում են տալյերեսը քաշած կաթ, բայց վոչ միանգամից, այլ աստիճանաբար. յուրաքանչյուր յերեք որից հետո յերկու ֆունտ մաքուր կաթը փոխարինում են յերկու ֆունտ յերեսը քաշած կաթով: Այսպիսավ, 2-րդ ամսված վերջին հորթին տալիս են միայն յերեսը քաշած կաթ. այդպիսի կաթով ցանկալի յե հորթին կերակրել մինչեւ 6 տասական հասակը: Մարուր կաթի փոխարեն յերեսը քաշած կաթ տալու դեպքում անհրաժեշտ ե տալ թեփ կամ քուսպ. սկզբում մի քիչ որեկան 1—1 $\frac{1}{2}$  ֆունտ, իսկ հետո 8—5 ֆունտ յուրաքանչյուր հորթին: Զորբորդ շաբաթից կարելի յե տալ անդաբար խոտ, վորպիսզի հորթը վարժվի կոշտ կերի:

Հաջող զարգացման համար պետք ե մասնաշ անասունին ազատ թողնել հորթանոցում կամ բակում՝ ազատ շարժումներ անելու և մաքուր ոդ ծծելու համար: Հորթանոցը պիտի ազատ լինի և արձակ, հորթի բկից պարան չպիտի անցնել և կապել, ինչպես մեզ մոտ անում են:

Աղ տալը հս շատ մեծ նշանակության ունի հորթանոցում լուզ և ունենալ աղի կոշտեր, վորպեսզի հորթերն ուզած ժամանակ լիզեն: Այդպիսի աղը նպաստում է, վոր ջանիլ անասունի վոսկորն ամբանա:

## ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑՔ ԱՆՍԱՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք աեսանք, վոր անտանապահության վերականգնման համար հարկավոր ե շատ աշխատանք թափել։ Այդ աշխատանքը պարտավոր ե կատարել մեր աշխատավոր գյուղացիությունը և կազմակերպել ընկերություններ կամ միությունները անասնապահության գարգացման համար։

Ընկերությունն ընտրում է վարչություն, վոր հոգ և տանում ցեղական անասունների պահպանման վրա, կազմակերպում է կարիք ունեցող շրջաններում ցեղական անասունների վաճառք, տալիս և անհրաժեշտ տեղեկություններ, խորհուրդներ և ցուցմունքներ։

Յեթե մեկը ցանկանում է ծախսել իր ջանիլ անասունը, գիմում է վարչության։ Վարչությունը շատ մատչելի գնով այդ անասունը ծախսում է վոչ թե մսագործին, այլ այն շրջանում, վորտեղ անասունի կարիք կա։ Մեր յուրաքանչյուր գտվառում պիտի հիմնել այդպիսի ընկերություններ։ Գավիողբաժինները պիտի լինեն այնպիսի հիմնարկներ, վորտեղ ցուցմունքներ են արվում ջանիլ անասունների առևտրի ժամանակ։

Այժմ գեռ այդ չկա. ծախսողն առնող է վիճակում, առնողն ել՝ ծախսող. բայց հին ուղիներով չպիտի գնալ. միաք չունի բացել պետական ցուլակայաններ և ժողովրդի ուշադրությունը չհրավիրել։ Այդ գեղքում նորից կերկնվի հին սխալը և գործը կփչանա։

Պետական դործին պետական վերաբերմունք ել յայց են առաջիւ Այլ բան կլինի, յեթե ցուլակայանների կամ անասնարուծարանների կազմակերպման գործին ձեռնամուխ լինի ինքը՝ կոռպերացման յենթարկված ժողովուրդը։ Այդ

դեպքում կլինի թե անհրաժեշտ ջանք, թե անասնապահությունը զարգացնելու կարեոր աշխատանքի գիտակցություն և թե հավատ ու համոզում, վոր ընդհանուր ուժերով կարելի յե դործ անել:

Ցեղական անասուն քիչ կա, յեղածն ել ավելի քչանում եւ, յեթե աեղերում համապատասխան կազմակերպություն չկա:

Ցեթե մի խումբ գյուղացիներ ցանկանան ազնվացնելիքնց անասունների ցեղը, գարնան ծնունդից անցնել աշնան, ապա նրանք ստիպված են լինելու ձեռք քաշել նախիք պահելուց և նախիքում կովը բեղմնավորելուց։ Ուրեմն՝ հարկավոր և զնել այն տեսակի ցուլ, վորպիսին ուղում են բազմացնել, ամեն մարդ չի կարող մի-մի ցուլ զնել, ուժը չի պատի։ Ահա հենց դրա համար ել մի խումբ գյուղացիներ միանում են և կազմում կամ ցուլային միություն, կամ անասնապահական կայանի ընկերություն։

Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտական ե՝  
1. իր կովերը, վոր գրանցված են ընկերության ցեղական մատյանում, բեղմնավորել ընդհանուր ցուլով, 2. ընկերության գործունեյության շրջանում յեղած անասնապահական ցուցանանդեսին դուրս բերել իր ապրանքը, 3. ընկերության վարչությանը աեղեկություն տալ իր ապրանքի, նրանց կերակրելու կարգի և շահավետության մասին, 4. վճարել տարեկան անդամավճար։

Այն գյուղացին, վոր յուր կովը ընկերության ցուլով և բեղմնավորել, առանց վարչության դիտության, իրավունք չունի մորթել կամ հորթը վաճառել մի ուրիշին՝ մասցի համար։

Միայն այն ժամանակ, յերբ ընակչությունը կկազմի նման ընկերություններ, մեր կաթնատու ապրանքը կը-լավանու, և վոչ թե տարեց տարի կվատանաւ ու կմանըրանաւ։

## ԻՆԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՔԱՇՈՎ ԿԵՐԱԿՐԵՑԵՔ

Կերի և կերակրման վերաբերյալ, հերթական խնդիր ե  
տուանց չափի կերակրելուց անցնել չափով և կշռով կե-  
րակրելուն:

Անասուններին քաշով կերակրեցնք, կշռեցնք կերը,  
կշռեցնք և տված կաթը, վորոշեցնք ձեր անասունի քաշը:

Քաշով կերակրելու գիխավոր նպատակն այն է, վոր  
կերի նվազ քանակից ստանալ ճնարավոր չափի սուավել  
սղուա, ալսինքն՝ ստանալ ավելի շատ միս, ճարպ, կաթ:

Բայց վերքան տալ և ինչպես կերակրել:

Առաջին ճարցի պատասխանը շատ պարզ է: Կովին  
պիտի տալ այնքան, վորակեսզի նա նախ՝ չլդարի և յերկ-  
րորդ՝ կաթ տա, վոչ տվել, վոչ պակաս: Հենց զրա մեջ և  
չափով կերակրելու գաղտնիքը:

Կովի սժանդակող կերը պիտի կոշտ լինի և լայնա-  
ծավալ, վորակեսզի պինդ լըցնի կովի առաջին ստամոքսը,  
վորը կարող է տանել մինչև 12 վեգրո ջուր: Պարզ է, վոր  
շատ գժվար է միայն ալյուրով լցնել այդպիսի ստամոքսը:  
պետք է ունենալ կամ խոտ ու դարման և կամ արմատա-  
պտուզ: Միայն այդ գեղքում կովը կկշռանա:

Կոշտ կերից պիտի տալ որեկան կովին կենդանի քաշի  
յուրաքանչուր փութին մի փունտ: այսինքն՝ յեթե կովը  
20 փութ է, ճարկավոր ե նրան ամեն որ տալ 20 փունտ  
խոտ: Խոտի փոխարեն կարելի յե տալ և դարմանը ճաշ-  
վելով, վոր 3 փունտ խոտը ճավասար է 4-5 փունտ դարմանի:  
Խոտի մի մասը կարելի յե փոխարինել արմատապտուզներով

Յ ֆունտ խոտի փոխարեն 8-10 ֆունտ արմատապաւզ:

Փոխարինման դեպքում անսպատճառ պիտի նկատի ունենալ և կերի ծավալը:

Կերն որական մի անգամ չպիտի տալ այլ 2-3, հա-  
վասար դադարից նետու: Կերը պիտի տալ վոչ տաշտի և  
վոչ ել կողովի մեջ, այլ հարմար ախոռում, վորպեսզի  
կերը թրիքին չխառնվի:

Շահագետ կերը, այսինքն այն կերը, վոր կաթ պիտի  
դառնա, մեծ ծավալ չպիտի ունենա, պետք և լինի ուժեղ,  
հարուստ աննդարար նյութերով՝ սպիտակուցով, ճարպով,  
շաքարով և ալյն, այսինքն՝ այն նյութերով, ինչ վոր կան  
կաթի մեջ: Այդպիսի կեր են գարու ալյուրը, թեփը,  
բուսալը, բամբակի հունգը և այլն:

Այդ կերից մեկը հարուստ և սպիտակուցով, մյուսը՝  
ճարպով, յերրորդն ոսլայով (կրախմալով) և այլն, այսինքն՝  
կաթ կազմելու համար անհրաժեշտ նյութերով: Դրա հա-  
մար ել կոչվում ե ուժեղ կեր:

Այդպիսի կեր կարելի յե տալ Յ ֆունտ կաթին մեկ  
ֆունտ հաշվելով, այսինքն՝ յեթե կովը տալիս ե 15 ֆունտ  
կաթ, նրան հարկավոր ե որեկան՝ 5 ֆունտ ուժեղ կեր  
տալ, ինչպես են որինակ՝ քուսալը, ալյուրը և այլն:

Բավական չե իմանալ, թե ի՞նչով կերակրել հարկա-  
վոր ե իմանալ նաև թե ի՞նչպես կերակրել: Ցեթե միենույն  
կերը զանազան տեսակ տանք կովին, տարրեր արդյունք  
կստանանք:

Ուժեղ կերը կարելի յե չոր տալ, կամ մի քիչ թրջել  
աղել թեթե և տալ ապուրի պես: Ուժեղ կերը տալիս են  
խոտի փշանքի կամ գարմանի նետ: իհարկե, կերի ծա-  
վալը փոխվում է:

Զիշացած և չծլած կարառֆիլը կարելի յե տալ հում,

միայն մանրած և ցեխից մաքրած։ Սաղ կարտոֆիլից  
կովը կարող է խեղզվել։ Յեթե կարտոֆիլը սառած է կամ  
ցրասաւար, կամ՝ բորբոժած ու փառած, ավելի լավ է կո-  
վերին չառը, մանավանդ ծանրած կովերին։ այդ գեղաքում  
կովը կարող է հորթառել։ Ծրած կարտոֆիլ կարելի յե-  
տալ յեփելուց հետո։

Բազուկ, գալար, շաղպամ կարելի յե հում տալ, ինչ-  
պես գանիացիք են տալիս։ Բայց յեթե ժամանակ կա և  
արժատապատուղն ել քիչ ե, ավելի լավ է մանրել, մի քիչ  
խաշել և տալ գարժանի հետ միասին, վրան թեթե ալյուր  
ցանելուց հետո։

Հարկավոր ե ջրել տաք գոմում, վոչ թե պաղ, այլ  
սենյակի տաք ջրով։ Ցուրտ ժամանակ չի կարելի գրառում  
տաք ջրով ջրել, գրանից կովերը շատ-շուտ գողում են և  
խոկույն մրսում։ Որեկան պետք ե յերկու անգամ ջրել,  
Ավելի լավ ե ջուրը պահել կովի գունչի տակ, վորպեսզի  
կովի ուղածի չափ և ամեն ժամանակ կարողանա խմել։

## ՏԱՄԵՐՈՌԴ ՊԱՏԳԱՍ

ԴՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ,  
ԶՐՈՒՅՑՅՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԴԱՄԲՆԹԱՑՆՆԵՐԻՆ ՀԱՃԱԽԵՑԵՐ  
ՅԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՉԵՐՔ ԲԵՐԵՐ

Ժողովրդական անահեռության և վոչ մի ճյուղ այնքան  
հարուստ չե նախագաղաքաւմով, անոտիագաշտությամբ,  
դուշակաւթյուններով, վորքան անանազահություններ, ել  
ստանանա ու բաջք, ել «չար աչք»...

Յեթե առավոտյան դեմ զումում կովերին բրանտծ են  
աեւննում, պատճառը սատանային են վերազրում, վոր իրը  
թե զիշերով կովերի վրա նսաել ու բշել եւ Յեթե կովի կաթը  
ցամաքել ե, ասում են՝ վորի «տակով ծիծեռնակ ե անցել»,  
կամ թե մի մարդ՝ «չար աչքանի ոքմին» աչքով ե տվել:  
Յեթե կովը չի որոճում, ասում են, թե կերի հետ մկան  
բռն ե կերել և այլն:

Յեվ ի հարկե, ոգնության են կանչում զանազան պա-  
ռավների և գլուխաստունա մարդկանց, վորոնք սատանայի դեմ  
միջոց գիտեն, ցամաքած կաթը շատացնում, վորոճալը վե-  
րադարձնում են:

Խավարի և աղիառության այդ հաստ շերտը պատռելը  
դժվարանում ե նրանով, վոր, ինչպես զյուղացիք են ասում,  
անասնապահությունը կանանց գործն եւ Գյուղի յերիտա-  
սարդությունը, վոր բաղաքներում ե յեղել, ծառայել ե բա-  
նակում, շատ ամիելի հեշտ ե նասկանում զանազան խորհուրդ-  
ներ ու ցուցմունքներ, քան աղջիկները ե, մանավանդ, հասա-  
կավոր կանայք, վորոնց ամբողջ կյանքն անցել ե անոտի  
հավատալիքի մեջ և պապերից լսած ցուցմունքով. «պապերից

հայրերին, հայրերից ել զավակներին ժառանդաբար անցնում են այդ զառանցանքները»:

Բայց և այնպիս հարկավոր և այդ խավարին վերջ տար, հակառակ զեպքում վերսիշյալ բոլոր խորհուրդներն որինակելի անասնապահության մասին անիրազործելի կմնան, ինչպես մինչև այժմ մնացել են։ Գյուղացիք ժողովում վարչությամբ են կազմակերպել կամքնառնահական որտեր, իսկ կոմիտերը կինն եւ նուշի ցանկանում, վոր մի ուրիշը խառնի տափարի գործին և գրանով ել վերջանում և խնդիրը։

Մնասի հավաալիքի և տղիտության դեմ կովելու միակ ճշմարիտ ուղին ժողովրդական լայն խավերի և, մանավանդ, զյուղի կանանց լուսավորումն եւ այդ ճանապարհն առուցված և և մեզ մոտ և արտասահմանում։

Գիտության ավյաների վրա հիմնված և փորձով ստուգած տեղեկությունները միայն զյուղը կազմակն մնասի հավատալիքից և վերջ կատն զյուղական խավարին։ Այդ զիտությունը ձեռք եւ բերվում վոչ միայն գողրոցում, այլ և զպրոցից գուրս, ինքնակրթությամբ և կյանքի փորձով։ Յեթե մեծահասակի համար զպրոցը փակ է, այդ գեռ չի նշանակում, վոր «ուշ և սովորել», վոր ժամանակն անցել եւ Յերիտասարդների զպրոցին հաջորդում և լրացնում և զպրոց մեծահասակների համար, իբր զյուղական գասընթաց, զրույց, ընթերցանություն և գասախոսություն։

Յեթե լավ զեկավարություն լինի և գործը լավ կազմակերպած, նույնիսկ կիսագրագետ մեծահասակի համար ել այդ գասընթացները մատչելի կլինեն և նա այդաեղ ձեռք կը բրի իր համար այժմ անհրաժեշտ գիտելիքը։ Դասընթացները հենց գողրոցից գրանով ել տարբերվում են. նրանք լուսավորում են մեծահասակ ընակչության և տալիս նն մատչելի անդեկություններ զյուղանահասության հրատապ խնդիրների մասին։ Այդպիսի զրույցների և գասախոսությունների մասին։

թյունների նպատակն ե վոչ միայն գասավանդեր, այլև համոզեր Դրա համար ել նրանց գուգորդում և մողական լոպաները, զանազան նկարներ և իրեր, վորագեսպի լուղը աչքով ևս տեսնի ու համոզիիւ Շատ հաճախ ընթերցման հետ փորձեր են անում, ինչպես որինակ՝ ցուցադրական կերպիրման փորձեր, վորոնցով հասանառում են կարդացածի ճշմարտությունը:

Արագպրոցական լուսավորության գործում խմբական զրուցներն անասնապահության վերաբերյալ, — հերթական գործ ե. զրա նպատակն ե միաբը զարթեցնել աւաշ բերել հետաքրքրություն ժողովրդի լայն խավերի մեջ զեպի անասնապահությունն ու կաթնառնաևությունը: Այդ ընթերցանության նյութը հրատապ խնդիրներ են և այնքան մատչելի, վոր համկանալի յե բոլորի համար: այդ զրուցների վայրը Խրճիթ-ընթերցարանն է, զյուղացու տունը կամ զյուղի գարոցը, կամ հենց զյուղում մի ոգա:

Հաջորդ ասաիճանը գասախոսությունն ե, վորի նպատակն ե զյուղատանաեսության այս կամ այն ճյուղի մասին ունեցած տեղեկությունը լայնացնել ու խորացնել: Դրա համար ել որվա վորոշ ժամին են լինում, վորոշ մնայուն ունեկնդիրների համար: Այդ գասախոսություններն ունենդիրներին տալիս են զեկավարող տեղեկություններ արնաեսություն վարելու մասին:

Վերջապես արտադպրոցական կրթության բարձրագույն աստիճանը դասընթացն ե, այդ դասընթացների նպատակն ե պատրաստել զանազան ճյուղերի համար աշխատակիցներ, որինակ՝ կաթնառնահաններ, կթողներ, նախրապաններ և այլն: Դրա համար ել դասընթացի հետ միշտ ել լինում և գործնական աշխատանք, վորագեսպի ունենդիրները փորձով սովորեն այն, ինչի մասին խոսվում ե դասընթացում:

Արտադպրոցական լուսավորության վերահիշյալ բոլոր միջացներն ել ճրատապ են և անհրաժեշտ Յեթե առանց զիտության չի կարելի բարձրացնել առանձին գյուղացիների անասնապահությունը, առավել ևս զժվար և բարձրացնել անասնապահությունը պետական անտեսություններում և անասնաբուժաբաններում, վորովհետեւ այդ կայաների աշխատակիցներն ըլջակա գյուղացիք են, առանց հատուկ պատրաստության ու փորձի:

Ամեն մարդ իր իմացած գործում վարպետ եւ յեթե հացթուխը կոշիկ կարող չի, ապա ամեն գյուղացի ել անասնապահ լինել չի կարող. հարկավոր ե մեզ մոտ ևս սահմանական այնպիսի վարովեաներ, վորոնց Դանիայում առում են «կերակրման վարպետ», այսինքն՝ անասուններին կերակրելու գործից հասկացող մարդ: Մեզ մոտ շատ իգուր են կարծում, թե հենց կերը յեղալի թե չե, ամեն մարդ ել կարող եւ առավարին կերակրել:

Մեր անասնապահությունը նկատելի չափով չի բարձրանա, մինչեւ վոր չկազմակերպենք գասընթացներ, կաթնատնտեսության վարպետներ, նախրապաններ և կթողներ պատրաստելու համար. Այդ գասընթացների կազմակերպության գործը կախված է գյուղացիներից: Յեթե նրանք այս գործին դիտակից վերաբերմունք ցույց տան, մնացածը հեշտ է: Պետք է գիտակից լինել, քանի վոր դասընթացների ունինդիլիները հասակավոր գյուղացիք են: Դրանով ել արտադպրոցական լուսավորությունը տարբերվում է գպրոցականից, վոր սկսվում է մանուկ հասակից: Այդ հասակում ի հարկե, չի կարելի պահանջել վոր մանուկներն ունենան դիտակից վերաբերմունք դեպի ավանդվող առարկաները:

## ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒՐ և ՅԵԼՔԸ

«Մեր նախադեսնային և լիոնային  
շքանների գրկություններ միայն տ-  
նասնապահության մեջ են:

Յելքը անասնապահության գարզացման մեջ է:  
Ասանց կերի անասնապահություն չկա:  
Յելքը խռարքութերի և արժուագաւզների մշա-  
կույթի մեջ է, արտասահմեղիների և խոահարքների բարե-  
լավման մեջ:

Հարկավոր և հասարակական (կոլեկտով) անասնա-  
պահական կայաններ հիմնել, պետք և անցնել անասնա-  
ներին չափով կերակրելուն, պիտի շինել լուսավոր և առք  
գոմեր, կաղմակերպել հակադություն կանոնավոր խնամքի  
և կերակրման համար, պետք և հրաժարվել նախիրում  
տավարը բեղմնափորելուց, ուրեմն և գարնան ծնելուց  
պիտի աշնան ծնունդին անցնել:

Յելքն՝ անասնապահական մթերքների կաղմակերպ-  
վոծ վաճառքի մեջ է, գասախոսություններին և գասրն-  
թացներին հաճախելու, կրթության և ինքնակրթության  
մեջ:

Յելքը՝ գեղի իր ուժերը և գեղի իր գործը ուն ցած  
հայտաբ մեջ է:

Անա թե ուր և յելքը:

Հնարեցնը այս յելքից վոր և ե մեկը, իսկ ավելի լույ  
կանեք, յեթե ընդունեք այն ամենը նույն կարգով, ինչ  
ասված և այսուղ, և զուք կուշտ ու հագնված կլինիք:

Զքնեք վոչ միայն զուք, այլ և զարթեցրեք ձեր հա-  
րեանին:



20.	Յերգինանգով.—Հավարուծ. և նըասպուտն.	20
21.	Ա. Դանելքեզ.—Լավ և ուշ, քան յերբեք (ազրո-պիյես)	20
22.	Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Կտավատը և կանեփը	20
23. Ա.	Լուկասին.—Անդրկովկասի տնտեսական դրությունը	15
24.	Հրահանց Հայաստանի Խ. Ա. Հանրապետության անտառներից փայտեղեն բաց բողնելու համար (պաշտոնական)	
25.	Պրոֆ. Ա. Վ. Քալանքար.—Կաթնասու կովի կերակրումը	30
26.	Ա. Ա. Տրիքոնով.—Ինչու պիտօք և ցելը շուտ անել	15
27.	Ա. Բակունց.—Գալուստի վիճը (ազրո-պատմվածք)	15
28.	Ա. Բակունց.—Կարտոֆիլի մշակությունը	20
29.	Լ. Սուբբոսին.—Կովի դասը (ազրո-պիյես)	20
30.	Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Տիզկանեփ	5
31. Խ.	Եեր. Ներսիսյան.—Պտղատու ծառերի վնասատուներն ու հիվանդությունները	25
32.	Խ. Ա. Վալերիանյան.—Գյուղի հողաշինարարությունը	20
33.	Արագի. —Տրակտորը (ազրո-պատմվածք)	15
34.	Ցալացի. —Խորհրդավոր տրաունչներ (ազրո-զրույց)	15
35.	Խնկո-Ապեր.—Գյուղատնտես-անասնաբույժն ու իր ազրո-զրույցը	20
36.	Ս. Ֆրիզովին.—Տասը պատղամ անասնապահին—Բ. հրատարակություն	20

### ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՑԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Մ. Խանգազյան.—Մեղվարուծության գործնական ձեռնարկ
2. Պ. Կալանքարյան.—Գոմազրի նշանակությունը պարարտցման դրույտ:
3. Խ. Եեր. Ներսիսյան.—Գոմազրը (տպագրվում է Մոսկվայում)

ԴԻՄԵԼ ՇԵՐԵՎԱՆ, Հողմովկոմահարակչության համարակալ:

Գետիրատի կենտրոնական յեվ գավառական գրախանություններին, Գավիհողաժիններին:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038742

[204]

ЦЕНА

~~АТ~~

38742

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

